ՀԻԱՊՈՒՀԱՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» օրաթերթի հավելված

1990 թ. դեկտեմբեր, № 6: Գինը՝ 50 կոպ.:

ԵՐԹԵՎԵԿՈՒ - ԹՑՈՒՆԸ ՎԵՐԱ - ԿԱՆԴՆՎՈՒՄ Է

Լենինական ժամանեց առաջին էլեկտրագնացքը:

Դեկտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը Երևանից Լենինական ուղարկվեցին վագոններ՝ հարկավոր բեռներով: Աղետի շրջան ժամանեցին կապավորների շարասյուներ, հյուսիսկովկասյան, Դոնեցկի և հարավային մագիստրալների երկաթուղային ձևավորումներ:

Թբիլիսյան հանգույցի ավելի քան 500 երկաթուղայիններ կամավոր մեկնեցին աղետի գոտի ճանապարհների մաքրման և քանդուցքների դուրս բերման համար:

Վոլոկամսկի կայարանի կոլեկտիվը բեռնել է անհատական տնակներ՝ աղետյալների համար:

Գորկու երկաթուղային ճանապարհներից դուրս են եկել վրաններով բարձված 10 վագոններ:

«ԼԵՆԻՆԳՐԱԴՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ»

Օգնության ֆոնդի հաշվին փոխանցել եմ 20 ռուբլի: Ես նախկին՝ 20-ական թվականների կոմերիտական եմ: Կոչ եմ անում բոլոր հին կոմերիտականներին իրենց ավանդը ներդնել տարերային աղետի հետևանքների վերացման գործում:

Վ. ԿՈՐԾՈՒՆՈՎ
Լենինգրադցի

Ֆրանսիա վերադառնալով արտասահմանյան հյուրախաղերից, նշանավոր ֆրանսիական շանսոնյե Շառլ Ազնավուրը անմիջապես կազմակերպեց օգնության ֆոնդ երկրաշարժի զոհերին: Կոչվում է այն «Ազնավուրը Հայաստանի համար»: Ֆոնդի նախագահ դարձավ դերասանի մշտական իմպրեսարիո Լևոն Սայանը: Ֆոնդը ընդունում է դրամական չեքեր, դեղորայք, ադեալներ, հագուստ, պատրաստվում են մի քանի ինքնաթիռներ այդ իրերով աղետյալ գոտի թռնելու համար:

Ն. ԴՈԼԳՈՊՈԼՈՎ
(«Կոմսոմոլսկայա պրավդա»)

«ՏՐՈՒԴԻ» ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՅՏՆՈՒՄ ԵՆ

«ՄԱՐԴՆ ԸՆԴԴԵՄ ՏԱՐԵՐՔԻ»

Աղջկա շագանակագույն աչքերում այնքան ցավ ու վիշտ կար, որ կրավարարեր շատերին, ովքեր անձամբ իրենց վրա չէին փորձել այն, ինչի միջով 14-ամյա Վիոլետան անցավ դեկտեմբերյան ճակատագրական այդ օրը: Ֆիզիկայի դասաժամի վերջում անծանոթ, հրեշավոր ուժը մի ակընթարթում բաղմահարկ դպրոցական շենքը վերածեց քարի ու երկաթբետոնի խաղաթղթերի, քամու առաջ մեր կացնելով արևից խավաչած, հրաշքով փրկված միջանցքը՝ ութերորդ դասարանցիներով: Ոտքերի տակ, այնտեղ ներքևում խիտ փոշիով ծածկված ամբողջովին ավերակ առաջին հարկն էր՝ հավասարված գետնին, որտեղ մի ժամ առաջ վազվզում էին երեխաները:

— Անժելա՞, — պոկվեց կրծքից ու շենքի ավերակների մեջ խլացավ ձայնը:

—Ես այստե՞ղ եմ,-լսվեց պատասխանը: Նրանց 9-րդ «Բ»-ն մեր կողքին էր: Փրրկված կտորի վրա երկյուղով բռնված երեխաների մի տասնյակ էր կանգնած: Բընազդորեն զգալով փրկության հույսը, Վիոլետան խուլ ձայնով ասաց.

—Իմ հետևից թռեք ներքև: Թե ինչ եղավ դրանից հետո, նա չի հիշում: Մեզ է նայում չտեսնող հայացքով: Փխրուն ու փոքրիկ ձեռքերը անօգնական կերպով փնտրում են սպորտային բաճկոնի ամրակները: Իսկ այսօր Վիոլետա Նսայանը իր քույրերի հետ «Արզնի» կուրորտում է, Լազարևի անվան սանատորիայում է, որը լիովին տրվել է նրանց, ովքեր զրկվել են ծածկից: Աղջիկը լենինականյան առաջին 20 ընտանիքների հետ ընդունվել է Հայաստանի կարդիոլոգիական առողջարանի հնագույն կոլեկտիվի կողմից: Այստեղ սպասում են աղետից տուժված 400 երեխաների...

Այսպիսի տեսք ունեին Երևանը և Կիրովականը դեկտեմբերյան մռայլավատ այն դժնի օրերին:

Կանխագուշակում

(Սկիզբը՝ «Հիշողություն» հավելվածի № № 4, 5-ում)

— Ինձ հետաքրքրում է կազմակերպչական այնպիսի մեխանիզմի ստեղծումը, որը չխոչընդոտեր երկրաշարժերի կանխատեսման ամենատարբեր ուսումնասիրությունների արդյունքների, բոլոր լուրերի, նկատած փոփոխությունների, նշանների կենտրոնացմանը,— ասացի ես:

— Հետաքրքիր միտք է,— ասաց Է. Նեմեչանովիչը,— իրոք նման կենտրոնի ստեղծումը կարևոր է:

— Կարելի է տվյալների բանկ հիմնել, ամենաժամանակակից սարքերով,— շարունակեցի ես:

Երկար ժամանակ ես ոչ մի բացատրություն չէի գտնում, թե ինչից է լենինականցի երկրաշարժագետների թշնամանքը Է. Նեմեչանովիչի նկատմամբ: Հետո լենինական ցիներից մեկը հայտնեց, որ մինչ տեսագրությունը իրենց մշակել էին ու խստորեն պատվիրել՝ Է. Նեմեչանովիչի դեմ խոսել ու քննադատել, խայտառակել: Ցավալի է, որ գիտնականը կարող է նման դեր ստանձնել:

Շատ է խոսվում նաև արհեստականորեն երկրաշարժ ստեղծելու առեղծվածի մասին, որը մտահոգում է մարդկանց: Իհարկե, ինձ հայտնի են նաև մի շարք գիտնականների, այդ թվում և Դ. Դ. Տուրեյի աշխատությունները, արհեստականորեն երկրաշարժի ուժը մեծացնելու հաշվարկները ու տեսությունը: Նրանք ապացուցում են երկրագնդի տվյալ տարածքում սեյսմիկ ակտիվությամբ բարձրացված, շրջակա միջավայրի վրա նպատակաուղղված գաղտնի ազդեցության հնարավորությունը:

«Սեյսմիկ զենքի օգտագործումը,— գրում է Դ. Տուրեյը,—հնարավոր է միայն տեղանքի ռելիեֆի առանձնահատկություններն իմանալու, երկրագնդի մակերևույթի տատանումների նախնական հետազոտման և հատուկ մտածված պայթյունի պայմաններում: Այդ հնարավոր է միայն երկրագնդի մակերևույթի և արտաքին ազդեցության սեփական հաճախականությունների համընկնման դեպքում»: Գիտնականը երկրաշարժի առաջացման գլխավոր ազդակներից է համարում նորդտվերտի էֆեկտ կոչվող տիեզերական ուժը, որը Երկրի շուրջը Լուսնի ուղեծրի հեռացման հետևանք է: Գիտնականն այն կարծիքին է, որ դեկտեմբերի 7-ին ժամը 11 անց 41 րոպեին Լենինականի երկրաբանական լայնությունում Լուսինը գտնվում էր իր ուղեծրի բևեռացման գագաթնակետին, ու նորդտվերտի էֆեկտը այստեղ ամենամեծ դերը կարող էր կատարել: Գիտնականը երկրորդ կարևոր ազդակ է համարում արհեստական ուժը: Այսպիսի ուժ էր, ըստ գիտնականի, դեկտեմբերի 7-ին տիեզերք արձակված գաղտնի բեռ կրող ամերիկյան արբանյակը: Բնական ու արհեստական ազդակների ազդեցությամբ ստորգետնյա ուժեղ ցնցում առաջացնելու շուրջ բանավեճը թողնում ենք գիտնականներին, մեղադրանքը ամերիկացիների հասցեին, թրվում է, պատասխանատու հայտարարություն է:

Վերջապես, շատ լուրջ խնդիր է պատմական անցյալում տեղի ունեցած խոշոր երկրաշարժերի ճշգրիտ պատկերի վերաստեղծումը: 1668 թ. հունվարի 14-ին Անդրկով կասում ավերիչ երկրաշարժի մասին հայ մատենագիրների վկայություններով գիտնականներին հաջողվեց այն գնահատել որպես տասը բալանոց: Կարևոր է այնպիսի աշխատանքային խմբի ստեղծումը, որն ընդգրկեր հին մատենագիտական աղբյուրների բաշատեղյակ պատմաբաններ, հնագետներ, երկրաբաններ, երկրաֆիզիկայի մասնագետներ, երկրաշարժագետներ:

Եթե ժամանակին՝ մի քանի տարի առաջ բյուրոկրատիան չխանգարեր գիտակցելու անցյալի երկրաշարժերի նոր մոտեցումներին ուսումնասիրությունների ու հնագիտա-երկրաշարժագիտության նորագույն եղանակների կարևորությունը, և դրանից ելնելով՝ կազմակերպչական միջոցառումներ մշակվեին, ապա վաղուց ողջ Կովկասի համար երկրաշարժագիտական ճշգրիտ քարտեզներ կունենայինք, ավելի ստույգ պատկերացում կկազմեինք ողջ տարածքի վրա կախված վտանգի մասին: Այսպիսի երկրաշարժագիտությունը շատ ավելի էժան է ու արդյունավետ, խոշոր կապիտալ ներդրումներ չի պահանջում:

Հենց նման քարտեզագրության պակասն էլ հնարավորություն տվեց Արարատյան դաշտում ատոմակայան կառուցել: Այո, այնտեղ աղետ տեղի չի ունեցել: Իսկ չէ՞ որ կարող էր էպիկենտրոնը Սպիտակից 50 կմ հարավ լիներ ու չերնոբիլյան աղետը նորի աղջև կխամրեր, կմոռացվեր:

Լսելով աղետի մասին, դեկտեմբերի 7-ին Հայաստանի կոմկուսի Կենտկոմում խորհրդակցության հավաքված մարդիկ իսկույն հիշեցին ատոմակայանը: Ուրեմն, նրանք զգում էին մեր ժողովրդի վրա դամոկլյան սրի պես կախված վտանգը:

Ատոմակայանն ավելի մանրազնին ուսումնասիրելու և վտանգի հետ կապված վերջնական եզրակացություն կազմելու համար Հայաստան ժամանեց ամերիկյան մասնագետների հանձնաժողովը փորձագետ Խադժինի գլխավորությամբ:

— Մենք Լոս-Անջելեսից ուղիղ այստեղ եկանք,—ասաց սպիտակացի փորձագետը,— մեր խումբը կազմված է «Բեկտել» ընկերության աշխատակիցներից: Այն զբաղվում է ոչ միայն ԱՄՆ-ի, այլև աշխարհի տարբեր երկրներում կառուցվող ատոմակայանների փորձարկումով: Հանձնաժողովը կաշխատի երեք շաբաթ: Մենք պետք է ճիշտ գնահատական տանք երկրաշարժերի գոտում հայկական ատոմակայանի հետագա շահագործման հնարավորությանը:

ԴԱԺԱՆ ՍԻՄՖՈՆԻԱ

ԱՇՈՏ ԳԷՈՐԳԵԱՆ

(ԼԵՆԻՆԱԿԱՆԻ Ա. ՄՈՒԱՎԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀԵՍԱ ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ԴԵՐԱՍԱՆ)

Մշուշը խեղդել էր Շիրակի ոսսան Գիմրին: Բոսսագոյն արեյվը դանդաղ դուրս եկաւ արեւելքից ու յոգնած բարձրացաւ երկինք... Ամենուր լսում էր շների աղեկտուր վնգստոց ու կատուների մոլոց...:

Ստորգետնյա ցնցում, խրլացուցիչ դղրդոց:

Զարագոյժ ու կործանող երկրաշարժ

Դղրդիւնով փլուող շէնքեր, խելակորույս նշագող, փախչող, օգնութիւն խնդրող մարդիկ, երեխաներ, կանայք, ծերունիներ..., ամենուր երկինք սլացող հրէ լեզուներ ու խեղդող փոշի: Մոլորուած աւտոմարտրդներ իրենց մեքենաներով շգիտեն թէ՝ որտե՞ղ եւ ո՞ւմ հասնեն օգնութեան...Քեներ կորցրած առնէտներ բներն են որոնում...: Կործանուող քաղաքի վրայ յայտնուեցին լէշակեր թռչուններ...: Անակընկալ յայտնուած աւերակների հրէշաւոր երախները ոռնում են՝ մահ..., մահ..., մահ...:

Գիմրին Բոմբէյի վերջին օրերի մէջ...:

Մի քանի վայրկեանում քաղաքը աւերակների կոյտ դարձաւ: Փլատակները կարծես շնչում ու շարժում են տակը մնացած մեռնողների աղերսից: Խելակորոյս մարդիկ աղեկտուր նշում ու արնակալած մատներով փորում ու փորում են փրյատակները: Անշարժ են խուլ փլատակներն ու իրար ցեմենտուած: Յոյսը կորցրած ու ցնորուած մարդիկ պտտում են փլատակների շուրջ ու ողբաձայն լալիս:

Կարծես խենթանոցներից փախած հոծ խմբերը անսպասելի յայտնուվեցին ամենուր...:

Զէնիթից բոսորագոյն արեւը արեան դանդաղ անձրեւ է մաղում...

Օգնեցէ՛ք:

Հին ու նոր գերեզմանները մանուան քայլերգով ներխուժեցին քաղաք...ու կարծես անցած-գնացած հանգուցեալների մեղմ մրմունջն էր լսում, իրենց ժառանգների անտեղի կոբսի, քարուքանդ եղած, աւերուած Գիմրիի համար: Աւերուած շէնքերի փշրուած ու մութ պատուհանները կարծես կենդանի մնացածներին աղերսում են վերադառնալ իրենց բնակարանները: Երկրաշարժ երէշը դեռ շարժում է ու նոր աւերուածութիւններ անում:

Ամենուր բոցկլտացող խարոյկներ երեւացին: Մարդիկ փլատակները շրջապատած սեւեռուն նսկում են...: Մեռնողների մեղմ նվոցը մարում է քաղաքի մթութեան ու մարդկանց լաց ու կոծի մէջ: Սառնամանիքը դանդաղ սեղմում է խարույկները շրջապատող մարդկանց: Գիշերը դժուար է հալում ձմրան սառնամանիքում:

Յանկարծ գիշերային խաւարում, մարդկանց խլացրեց մի անաւար ճիչ..., կարծես ամբողջ քաղաքի կանայք էին ճչում: Խարույկի մոտ խմբուածները վայրկենապէս ոտքի ցատկեցին, վերցրին վառուող փայտերը եւ անցան փլատակից-փլատակ...: Կանացի օգնության ճիչ-աղերսը չէր դադարում...:

Երկուսի էր:

Մարդիկ համախմբուած գտնեցին այն փլատակի վրայ, որտեղից լսում էր ծրնրնդկանի ճիչը...: Բոլորը կարծես զառանցանքի մէջ ընկած, գերբնական ուժով բացեցին փլատակի «երախը»...: Ամրոխը մոռացած իրեն հասած դժբախտութիւնը ու վիշտը, ձեռքից-ձեռք խլեցին նորածնին, փաթաթեցին լաթերի մէջ ու շարժեցին դէպի խարույկները: Փրկուած մայր ծնողկանը, մոլորուած նստած փլատակների վրայ, լուռ արտասուում էր...

(Շարունակելի)

«Ապագա» շաբաթաթերթից

Կանադա

Պետական տեսչության և ավտոկայանի շենքերը աղետից անմիջապես հետո:

ՀԱՑԱՍՏԱՆՑԻ ՌՈՄԵՈՆ ՈՒ ՋՈՒԼԻԵՏԸ

«...Քայլերի վրա, ամուր իրար գրկած հանգել են տղան ու աղջիկը՝ երկու անշունչ մարմին: Երեք օրից Նարինեի ու Խաչիկի հարսանիքն էր: Փեսացուն ձեռքերով փաթաթել էր աղջկա գլուխը, երևի հոտածել էր, որ կփրկի.. Եվ մարդիկ չամաչելով իրենց արցունքներից, ագում էին հայաս տանցի Ռոմեոյի ու Ջուլիետի մահը...»

Այն օրերին այսպես գրեց «Նովոյե վրեմյա» ամսագիրը Նարինե Հովհաննիսյանի և Խաչիկ Աբրահամյանի մահին:

Երկուսն էլ ուսանող էին, սովորում էին մանկավարժական ինստիտուտում: Երկուսն էլ որպես մարդ ու ընկեր սիրված ու գնահատված էին շրջապատում: Երկուսն էլ լավն էին ամեն ինչով: «Կարծես չոկած լինեն», նայելով նրանց հետևից ինքն իրեն ասում էր Խաչիկի մայրը ու անմիջապես սրբելով երջանկությունից ծնված կաթիլները աչքերը հառում էր երկինք ու բախտավորություն մաղթում:

Եկավ, սակայն, մահը: Ինչպես բանաստեղծն է ասում: «Եվ մահն եմ ատում, երբ հյուր է գալիս աղջկատեսին»:

ՍԱՄԲԻՍՏ ԵՎ ՆԿԱՐԻՉ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎՈԼՈԴՅԱՑԻ ԾՆՆԴՅԱՆԸ ծնվել է 1972 թ., օգոստոսին: Ընդունվել էր Բ. Ղափիրջանյանի անվան դպրոցը: Զոհվեց 10-րդ դասարանում, դասի ժամանակ:

Սաշան, այսպես էին կոչում նրան ընկերները, հեղինակություն էր դասարանում: Երրորդ դասարանից զբաղվում էր սպորտով՝ սամբոյով, մասնակցել է մի շարք միութենական մրցումների, ամենուրեք հաջողությունների հասել: 1983 թվականից Մերկուրովի անվան գեղարվեստի դպրոցի սան էր: Նկարում էր մեծ հրապուրանքով: Նկարչությունը նա համարում էր իրեն ապագա, իսկ սպորտով նա պարապելու էր այնքան ժամանակ, որքան կուղեկցեին նրան երիտասարդությունն ու ուժը: Հատկապես սիրում էր հումանիտար առարկաները: Բարձրահասակ էր, մարզված, գեղեցիկ, սակավախոս, մի քանի հոբիների տեր: Սաշան ընկերների և ուսուցիչների սիրելին էր, դպրոցի պարծանքը: Կարճ ապրեց, բայց խոր հետք թողեց իրեն ճանաչողների հոգում:

ՀԳՐՎԱԾ ՆԱՄԱԿ

Երբ, պատահում էր, փողոցում լսում էի կոպիտ խոսքեր, սիրտս ցավում էր, չէի կարողանում անտարբեր անցնել, միջամտում էի, փորձում հաշտեցնել, բարի մի խոսք ասել: Ինքս էլ էությամբ բարի էի ու ուզում էի, որ մարդիկ միշտ ջերմ ու սիրալիր լինեին իրար նկատմամբ: Երազում էի ռադիոմեխանիկ դառնալ, բայց անիրավ աղետը կտրեց ոչ միայն երազանքիս, այլև կյանքիս թելը: Ոչ միայն իմը, շատերինը, նրանց մեջ նաև հոգուս գաղտնարաններում սիրո ծիլեր նետած այն աղջկանը: Բացում եմ սրտիս գաղտնիքը, որովհետև... իսկ մենք ինչեր էինք երազում, ինչեր էինք որոշել, ինչ հույսեր էինք փայփայում, ափսոս...

Սիրելի հարազատներս, շատ մի վշտացեք, հպարտ եղեք, որ ձեր ՀԱՄԼԵՏԸ ոչ ոքի սիրտ չի կոտրել իր տասնյոթ ամյա կյանքի ընթացքում: Այդ անհոգի աղետն էր, որ շատերի հետ իմ սիրտ էլ փշուր-փշուր արեց:

Մնաք բարով, համբուրում եմ բոլորիդ: Հեռացածի իրավունքով պատվիրում եմ ձեզ բարի ու հարգալից լինել միմյանց հանդեպ, սիրեք մեկմեկու...

Ձեր՝ ՀԱՄԼԵՏ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԱԼԲԵՐՏԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

21 տարեկան էր: Քնքուշ, քնքուշ այս աղջիկը սովորել էր Ռաֆֆու անվան դպրոցում, ապա ուսումը շարունակել հաշվապահական դասընթացներում: Նոյեմբերի 2-ին հիվանդացել էր և պառկել համալիրում:

— Դեկտեմբերի 6-ին ուրախ-ուրախ դեմս ելավ,—հիշում է մայրը,— վաղը ինձ դուրս են գրում, դու մի արի, ես ինքս կգամ...

Նա չեկավ: Ծաղկում կյանքը խավարեց: Մնացին երազ, մուրազ, սերը սրտում, հենց կյանքի շեմին: Մայրը երազ տեսավ, որ գնում էր աղջկա հետևից՝ ձեռքին երկու կակաչ բռնած: Առավոտյան այդ տրպավորությամբ էր, ականջը կախ ինչ-որ բանի էր ուսում: Երազը իրական դարձավ: Սուսաննան մնաց հիվանդանոցի փլատակների տակ, իսկ նրա քույրը՝ Սվետլանան փրկվեց: Ինչո՞ւ տեսավ երազը, ինչո՞ւ իրականություն դարձավ այն ու խլեց-տարավ բալենու նման նորափթիթ ու նրբաթերթ իր աղջնակին:

ՎՈԼՈԴՅԱ ՊԱՊԻԿԻ ԹՌՈՒՆԻԿԸ

ԱՐՏՅՈՒՇԱ ԼԵՌՎԱՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ ծնվել է 1983 թվականին, Լենինականում: Զոհվել է Վարդաշենում իր տատի՝ Սեդա Կարապետյանի հետ միասին:

Ապրեց ընդամենը հինգ տարի: Հասցրեց այբբենարան բաց անել, դպրոց գնալ, սովորել: Բայց որքան հուշեր թողեց, որքան ցավեր, անհանգչելի մեծ վիշտ:

Վոլոդյա պապիկը ուշքի չի գալիս իրենց հասցված հոգեկան ծանր հարվածից: Նայում է խաղալիքներին, աչքերն են արցունքով լցվում, հանդիպում է նրա սիրած իրերին, հայացքը չի կտրում, ամեն առիթով հիշում է Արտուշիկին, նրա խոսքերը, քնքշությունները, չարությունները, կենդանի ձայնը ու աչքի առաջ է կանգնում գանգրահեր, սևաչվի չքնաղ մանուկը:

15 ԳԱՐՈՒՆ

Բազմաբնույթ հետաքրքրությունների ու նախասիրությունների տեր էր № 16 դպրոցի 8-րդ դասարանի լավագույն աշակերտուհի ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ: Սիրում էր կարդալ, պարել, ուներ թովիչ ձայն: Երազում էր կինոդերասանուհի դառնալ: Ձեռքի գնդակն այնպես էր հնազանդվում աղջկան, ասես Հեղինեն ծնվել էր հենց այս մարզաձևի համար:

Դասարանի ավագն էր նա, դասընկերների ու մանկավարժների սիրելին: Ավաղ, իր խազմաթիվ համադասարանցիների նման անավարտ մընացին Հեղինեի երազանքները, նա ևս դարձավ չար աղետի զոհը՝ չհասնելով կյանքի 15-րդ գարնանը:

ԱԼԵՔՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՍԻԼԻ

Ծնվել է 1981 թ. փետրվարի 19-ին, սովորել է № 35 դպրոցի երկրորդ դասարանում:

ԱԼԵՔՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՎԱՍԻԼԻ

Ծնվել է 1976 թ. ապրիլի 22-ին, սովորել № 35 դպրոցի 6-րդ «Բ» դասարանում: Զոհվել են տանը՝ Կոշտոյան 5 բ., բնակարան 15:

Պատմում է հայրը. «Չգիտեմ ինչպես նկարվեմ նկատագիրը: Գայանեն հիվանդությանն պատճառով դասի չգնաց: Տանը մնաց նաև Հովհաննեսս: Գայանեն շատ էր սիրում շախմատ խաղալ և գնում էր պարապմունքների: Տղաս դպրոցում էլ լավ էր սովորում:

Կյանքի վերջին երկու ամիսներին արտակարգ ջերմությամբ էր սիրում մորը, փաթաթվում էր ու անընդհատ համբուրում, կարծես կարոտը չէր հագեցնում:

... Իսկ ինչ կարոտով հիշեմ ձեզ, իմ սիրասուն բալիկներ»:

ՄԵՐԻ ԿԱՐԼԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել ու մեծացել է Ախուրյանի շրջանի Ջաջուռ գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 10-րդ դասարանում էր, սովորում էր գերազանց, սիրում երգ ու երաժշտություն: Դասերից հետո Մերին ամեն օր օգնում էր մորը տնային գործերում, պատրաստում դասերը, ապա զբաղվում երաժշտությամբ. կարդում էր երաժշտական գրականություն: Չէր կարող անտարբեր մնալ, երբ ռադիոյով և հեռուստատեսությամբ երաժշտություն էր տրվում...Երազում էր այն օրը, երբ երաժշտական կրթություն կստանա:

ՄԵՐ ԱԶԲԻ ԼՈՒՅՍ ԲԱԼԻԿՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌԱՖԱՅԵԼԻ

ԳԱԼՈՅԱՆ

Ընդամենը 6 գարուն տեսած Հովհաննեսը այլևս չկա: Կը-տըրվեց փոքրիկի կյանքի թելը Ղարիբջանյանի անվան դըպ-րոցում, որտեղ չհասցրեց ան-գամ գրաճանաչ դառնալ: Ինչ իմանար փոքրիկ Հովհաննեսը, որ իր ծնունդով այնքան ու-րախություն պարգևելուց հետո, իր մահով պետք է անբուժելի վերք դներ մոր սրտին ու...

ՉԳՆԱՀԱՏՎԱԾ

ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1981 թվականի մայիսյան մի պայծառ առավոտ ծնվեց փոք-րիկ Մարինեն: Ծննդականով՝ ՄԱՐԻՆԵ ՎԱՉԱԳԱՆԻ ՂԱ-ԶԱՐՅԱՆ: Մարինեն երազում էր, թե երբ կգնա դպրոց, ինք-նուրույն հեքիաթներ կկարդա, ոտանավորներ կսովորի:

Դպրոցում աչքի ընկավ իր ընդունակություններով: Դեկ-տեմբերյան այդ մռայլ առավո-տը, երբ հայրը աղջկան դըպ-րոց տարավ, նրան թվաց, թե երեխան գունատված էր ու խեղճացած:—Ուզո՞ւմ ես, հարց-րեց, տուն դառնանք:

—Ոչ, հայրիկ, այսօր ստու-գողական աշխատանք ունենք:

Ու գրեց. 7-ը դեկտեմբերի (թելադրություն)...

№ 9 դպրոցի ուսուցչանոցի գրապահարանում պահպանվել էին 1-ին դասարանի աշա-կերտների գրավոր աշխա-տանքները՝ գրված, բայց չգնահատված...

Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍՏԻԿԸ

Դժոխագին այդ պահին ան-գամ Եսայան փողոցի ի-րենց տան փլատակների տակ Վ. Տերյանի ան-վան դպրոցի աշակերտուհի ՀԱՍՏԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ իր անհանգստությունը հայտնեց մորը՝ դասերից ուշանալու հա մար:

Ի՞նչ իմանար քնքուշ աղջնա կը, որ այդտեղ ավարտվելու էր իր մատաղ կյանքը, որ այլևս չէր հաճախելու սիրելի դպրոցը, չէր վերադառնալու հարազատ օջախը՝ ուրախացնե լու ծնողներին յուր առաջադի մությամբ:

Հաշմված մոր՝ Սիրանուշի ականջին շարունակ հնչող սիրասուն դստեր խոսքերը այս օր մերթընդմերթ ընդհատվում են նորածին որդու աղավնա-յին ձայներով:

ՍԵՎԱԿ ՄԿՐՏՉԻ

ՄԱՆՈՒԿՅԱՆ...Իսկապես որ սև ակն՝ խոշոր, բոցկլտուն, խոհուն ու անվեհեր հայացք ուներ. այսպես էլ մը-նաց իր դասընկերնե-րի, ուսուցիչների հի-շողության մեջ Կրուպսը-կայայի անվան № 23 դըպ-րոցի 4-րդ դասարանի աշա-կերտ Սևակ Մանուկյանը: Մնաց իր աչքի ընկնող ըն-դունակությամբ, շիտակ, ազ-նիվ բնավորությամբ, համես-տության և անպայման՝ սև, խոշոր աչքերով:

Դասարանում ամենաբարձ-րահասակն էր Սևակը և ընտ-ում էր վերջին նստարա-նին: Եվ դարաբաղյան շարժ-ման այն օրերին, երբ լսում էր պատմությունները Արցախի, հայ ժողովրդի մղած հերո-սամարտերի, աչքերը վառ-վում էին անսովոր կրակով, հայացքը դառնում էր արծ-վենի, կամքը՝ անկոտրում: Եվ ես, նրա հայերենի ուսու-ցիչը ներքուստ հպարտանում էի. այո, անպարտ ու հա-վերժ է այսպիսի զավակներ ծնող ու դաստիարակող ժո-ղովուրդը:

Եթե... այս եթե-ներն այսօր էլ ահագնացող ցա-վով, կորցրածը ետ չբերողի կսկիծով են արտասանում ծը-նողները:

Եթե այդ օրն էլ, ինչպես նախորդ օրերին, մայրը հե-տը դպրոց տաներ, եթե չլի-ներ այդ ահավոր երկրաշար-ժը:

Արմենուհի ԶԱՔԱՐՅԱՆ

...ԿԱՊՈՒՅՏ ԱՂՋԻԿ,

ԱԳԱԹԻ...

Արև կար քո գեղեցիկ աչ-քերում, արև, կյանք ու լույս... Կենսախինդ էիր, եռանդուն այնքան, որ դիմացինն էլ էր վարակվում գործելու, ծիծա-ղելու, լիաթոք շնչելու ու ապ-րելու քո տրամադրությամբ:

«Սիրելի Աննա». այսպես էին դիմում քեզ շրջապա-տողները, պոլիտեխնիկա-կանի քո ընկեր-ընկերուհի-ները:

Սիրելի աղջնակս... մինչև այսօր այս բառերը չեն ազա-տում մորդ շուրթերից: Անդա-դար խոսում է քեզ հետ, գը-րուցում որպես կենդանի, կողքին կանգնած մարդու հետ: Տունը պարուրած թախիծն անգամ ցրող, նկարից ժըպ-տացող քո աչքերին նայելիս մինչև օրս էլ հայրդ չի կա-րողանում սանձել սրտի մոր-մոքից ծնվող կաթիլները ու ինքն իրեն մրմնջում է՝ սիրե-լի Աննան...

Տասնութամյա աղջիկը թո-ղեց այս աշխարհն ու հեռա-ցավ ընդմիշտ: Կիսատ մնաց շատ բան՝ թևավոր երա-զանքներ ու հեքիաթային ե-րազներ, կիսատ մնաց կյանք-ի օրագիրը, որ պահում էր Աննան, ու որի մեջ գրված էր՝ Աննա Ոսկանյան՝ ծնվ. 1971 թ. Կմահանա 1988 թ:

...Օ, ՀԱՅԵՐ, ՀԱՅԵՐ

ԱՂՈՒՆԻԿ ՌԱԶՄԻԿԻ ԿՈՍ-ՏԱՆՅԱՆԸ ծնվել է 1974 թ., սովորել Ա. Պետրոսյանի ան-վան դպրոցի 8-րդ Բ դասա-րանում: Եղել է ուսման գերա-զանցիկ, մասնակցել օլիմպիա-դաների, շահել պատվոգրեր: Երազանքն է եղել իրավաբան դառնալ: Գրել է բանաստեղ-ծություններ: Վերջին ամիսնե-րին Ղարաբաղն էր բույն դը-րել նրա մատաղ հոգում, ո-րը ճնշում էր, ստիպում հարց-նել ու հարցնել հայրենակից-ների մասին:

Հայրենասեր աղջնակը հա-ճախ էր իր մտքերը չափա-ծո արտահայտում, կարդում ընկերների համար, ուրախաց-նում հարազատներին ու բա-րեկամներին իր առաջին թո-թովանքներով, իր պաթոսով, մանկական տարիքին անհա-մեմատ հասունությամբ: Այդ լարված օրերին նա ևս ան-հանգիստ էր, մեծին հատուկ թախծոտություն էր իջել նրա սևորակ աչքերին.

Ա, հայեր, հայեր,

Հայրենասեր հայեր.

Գիտեմ ոտքի եք ելել,

Որ Ղարաբաղը պահեք...

ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1979 թվականին, սովորում էր Ա. Պետրոսյանի անվան № 10 միջնակարգ դպրոցի երրորդ դասարանում: Ծնապում էր, դասաժամերը հաշվում, որ շուտ վերադառ-նա տուն. այդ օրը ավտոմեքե նաների ու օդանավերի իր հավաքածուն հարստանալու էր ևս մեկ օդանավով: Հաստատ որոշել էր օդաչու դառ-նալ: Ինչ մտքով անցներ, որ վերջին դասից այլևս վերա-դարձ չկա:

ԱՐՄԵՆ ԱՂԱՋԱՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1978 թ. մայիսի 22-ին: Սովորում էր Գ. Սուն դուկյանի անվան № 20 միջ-նակարգ դպրոցում: Նա մի դպար շիվ էր, որ արհավիր-քի անողոք ձեռքը պոկեց ար մատից: Ամեն ոք, ով նայի այս լուսանկարին, կասի՝ դո՞ւ էլ, իմ քնքուշ, փոքրիկ բալիկ...

Վաղ տարիքում դաշնամուր ու դհոլ էր նվագում: Նա ինքնուս էր:

Նրան ստիպելով դպրոց ու-ղարկեցին, այնպե՞ս չէր ուզում գնալ:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆԸ.

Ծնվել է 1977 թվականի հու-լիսի 26-ին: Սովորում էր Օրջո նիկիձեի անվան և Ն. Տիգրան յանի անվան երաժշտական դպրոցներում:

Սակայն աղջնակը երազել էր դառնալ մանկավարժ: Այդ օրը 11-ամյա Օֆելյան արթ-նացավ մի տեսակ տխուր, անտրամադիր, չէր ուզում դպրոց գնար... Հայրը վազել էր դպրոց, փրկելու իր աղջ կան, չքնաղագեղ Օֆելյային:

Բայց գլխից վիրավորված աղջիկը չհասցրեց տեսնել հո-րը, մորը և մյուս հարազատ-ներին:

ԳԵՂԵՑԻԿ ԱՆՈՒՇԻԿԸ

ԱՆՈՒՇԻԿ ԵՂԻՇԻ ՇԻՐՈ-ՅԱՆԸ ծնվել է 1978 թվակա-նին, Սպիտակ քաղաքում: Փոքրուց այնքան լավիկն էր, որ պատահողը գրկում և ա-սում էր. «Ինչ անուշիկն կա»:

Այդպես էլ անունը մնաց Ա. Նուշիկ: Մանկապարտեզում սովորեց գրել և կարդալ: Ե-րաժշտական դպրոցի դասա-տու մայրը սովորեցրեց ձայ-նանիշերով նվագել: Աղջիկը երկու դպրոցում էլ սովորում էի գերազանց գնահատա-կանքներով:

Այդ օրը դպրոց գնաց ան-տրամադիր: Հետ նայեց, կարծես մի բան մոռացել էր: Երկիրկանի նրանց տունը. բանդվեց: Անուշիկի ծնողներն ու քույրերը մնացին պանել-ների տակ: Բարեբախտա-բար, փրկարար ջոկատները շուտ հասան, օգնեցին ողջ մնալու և սգալու Գեղեցիկ Ա-նուշիկի ծանր կորուստը:

Մ. ՅՈՐԳԱՆՑ.
«ԿՀԻՐԵՄ ՔԵԶ...

87 հոգի. Այսքանը «Մագնոն» հատուկ կոնստրուկտորական- տեխնոլոգիական բյուրոյում: Նրանց թվում էր ԱՆԱՀԻՏ ԲԱԲԿԵՆԻ ՇԱԽՄԻՐԱՆՑԱՆԸ:

Հիշում եմ «Մագնոնի» ընդարձակ սրահում փակցված մի գոբելեն աշխատանք, ուր շեն քի արտաքինն էր պատկերված, շատրվաններ, ծառեր: Հեղինակը Անահիտն էր:

Իմ մեջ ցանկություն առաջացավ նորից դիտել քո գոբելեն աշխատանքները: Գնացի ձեր տուն: Դու նկարիչ չէիր, բայց որքան լավ էիր վերարտադրել բնությունը: Քո աշխատանքներից մեկը ռուսերով նվիրեցիր սիրելի նշանավոր երգիչ Մարտեն Յորգանցին: Այն պատկերում էր Արարատը, ներդաշնակ գույներով գեղեցիկ մի գոբելեն: Հիացավ Յորգանցը. «Այն կկախեմ իմ սենյակում ու կը հիշեմ քեզ»: Երգիչն համբուրեց Անահիտին: Նա Ֆրանսիա տարավ քո «Արարատը»: «Արարատը»:

Բայց Յորգանցը չիմացավ, որ ամեն անգամ նայելով իր սենյակում փակցված կոմայ բեցի աղջկա՝ Անահիտի ընտեղծած այդ գոբելենին, ցան կության դեպքում այլևս չի կարող տեսնել նրան:

ՌՈԶԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՀԿՏԲ «Մագնոն»

ԿԱՐԻՆԵ ԴԱՎԹԻ
ՈՍԿԱՆՅԱՆ

Ծնվել է 1957 թվականին՝ Կումայրիում: Սովորել է Մ. Մաշտոցի անվան դպրոցում: Վաղ հասակից զրկվել է հորից և մտիպված մոր հետ հավասարապես կիսել է ընտանիքի դժվարությունները, սկսելով աշխատել դեռևս դպրոցական տարիներից: Կարինեն, չնայած իր երիտասարդ տարիքին, էլեկտրատեխնիկական գործարանում իր հաշվին գրանցել էր 13 տարվա աշխատանքային ստաժ: Ընտանիքը պահելու հոգսերով և հիվանդ մորը խնամելով զբաղված Կարինեն նույնիսկ չհաջողեց ամուսնանալ: Աշխատանքից նոր էր վերադարձել տուն, երբ սկսվեց երկրաշարժը:



ՍԱՇԻԿ ԽԱՉԻԿԻ
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ծնվել է 1953 թ. Կումայրիում: № 32 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո մեկնել է զինվորական ծառայության: Զորացրվելուց անմիջապես հետո անցել աշխատանքի:

Մագնիսահաղորդիչների գործարանում որպես խառատ էր աշխատում մինչև դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժը: Զոհվեց աշխատատեղում: Երկու երեխաների հայր էր, նվիրված էր ընտանիքին և ընկերական շրջապատին:

ՎԱՐՊԵՏ ԳԵՎՈՐԳԸ

Տուն էր շինում, երբ իր տունը քանդվեց... Ծինարար էր, քաղաքում ճանաչված ու հարգված: Տունը հիմքից մինչև ծածկ կհասցներ ու գոհու նակությամբ կծպտար,—«Տուն եմ շինում, լավ բան է...»: Մի կտոր հացը առանց ընկերների ու բարեկամի, առանց երգ ու պարի կուլ չէր գնում: Մեծ տղան երաժիշտ էր, երկրորդը՝ պարող, փոքրը՝ դհոլչի. էլ ինչ էր պետք, քեֆն ու ուրախությունը անպակաս էին տանից: Արտանց էր ուրախանում ամեն ինչի համար: Երբ անդրանիկ թոռն էր ծնվել, աշխարհն իրեն էին տվել: «Գևորիկ եմ ունեցել, Գևորիկ...» Առանձին անհամբերությամբ էր սպասում փոքր որդու խորհրդային բանակից վերադառնալուն: «Ինչ քեֆ եմ անելու» ասում էր: Արեց... Մենք էլ պատրաստվում էինք նշելու մեծ մարդու 50-ամյակը: Մարդ, որ ոչնչով չէր մերժի իրեն դիմողին, որ հայր էր եղել նաև եղբոր որբերի համար: Պատրաստվում էինք, ինչ ծրագրեր ունեինք: Նշեցինք 50-ամյակը՝ գերեզմանոցում, սուգ ու շիվանով, դառը լռությամբ: Հիսուն մոմեր վառվեցին, հիսուն ծաղիկներ հանգան գերեզմանաքարին: Ծատերն էին մերկա այդ օրը, բացակա էր միայն հոբելյարը...

Եղբոր որդին՝
ԱՇՈՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՄԵԿԸ ԿՈՄՊՐԵՍՈՐԱԳՈՐԾԵՐԻՑ
ՓԱՓԱՆՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ
ՄԿՐՏՉԻ

Ծնվել է 1934 թ. մայիսի 1-ին, Լենինականում, բանվորի ընտանիքում: Դեպքերի բերումով չի ավարտել մանկավարժական ինստիտուտը, ընդունվել է հաշվապահական դպրոց: Աշխատանքի է անցնում հեծանիվի գործարանում: Այնուհետև հիմնադրվում է կոմպրեսորների գործարանը: Հիմնադրման օրվանից Սիրանուշը անդամագրվում է նոր կոլեկտիվին և մինչև իր կյանքի վերջին պահը նրա հետ էր: Սիրանուշը միշտ շարքում էր...

ԱԻԴԱ ԿԱՐԼԵՆԻ
ԲՈՑԱՋՅԱՆ
(ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ)

1961 թվականին էր ծնվել, հայոց մեծ եղեռնի օրը՝ ապրիլի 24-ին:

Ամուսնացել էր, երկու երեխաներ ուներ՝ մի տղա և մի աղջիկ: Ուրախ ու երջանիկ էր ապրում, մտքով չանցնելով, որ վիճակված չէր երկար ապրելու՝ ամենաուրախ Գյումրին վերածվելու է ամենատխուր քաղաքի, ողբերգական իր սև կնիքը թողնելով մարդկանց ու սերունդների հիշողության մեջ, խլելով տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց կյանքեր:

ՍԵՐԳՈԺԱ ՍՈՒՐԵՆԻ
ՄԵԶԻՆՅԱՆ

Ընդամենը 35-ն էր բոլորել Սերյոժայի, երբ կուլ գնաց կոր ծանարար երկրաշարժին: Սովորել է Խ. Աբովյանի անվան № 12 դպրոցում, ծառայել բանակում, հետո զորացրվել, ամուսնացել ու տուն-տեղ դրել:

Երկրաշարժից մեկ օր առաջ կնոջը՝ Կարինեին պատմում է, որ երազում իրենց ֆաբրիկան (կոշիկի) փուլ եկավ, ինքն էլ մնաց փլվածքի տակ: Տունը մոտ էր ֆաբրիկային և ամեն օր ժամը 11-ին գալիս էր նախաճաշելու: Ծակատագրի չար կամքով այդ օրը Սերյոժան տուն չգնաց: Անցան սպա սումի, հույսի ու տառապանքի չորս երկար ու ձիգ օրեր: Ոմանք ասում էին, թե տեսել են նրան դրսում, բայց ո՞ւր էր, մի՞թե ծտի թևով չէր հասնի տուն՝ ծնողներին, կնոջը, 9 և 4 տարեկան սիրասուն զավակներին, որոնք միակ մխիթարանքն են մնացել հարազատների, որոնք պիտի ծխացնեն այնքան շուտ հանգած Սերյոժայի օջախը:

ՄԻԱՅՆ ԹԵ ՄԱՅՐՍ...
ՌՈԶԱՄԻԿ ՆԱՊՈԼԵՈՆԻ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ այնպես սիրում էր հանրաճանաչ երգի տողերը՝ «Միայն թե մահս մայրս չիմանա»: 14 տարեկան էր, երբ մահացավ հայրը: Ավագը Ռազմիկն էր, որ մնաց վատառողջ մոր և իրենից փոքր չորս քույրերի հետ:

Երկաթուղային ծառայողի ընտանիքում է ծնվել, 1933 թվականին, ուսանել է Զաջուռի միջնակարգ դպրոցում: Հյուսնի աշակերտ էր վագոնային դեպոյում, ապա վարպետ: Առանց աշխատանքից կտրվելու նա սովորեց և ավարտեց Ռոստովի ինդուստրիալ ինստիտուտը: 1965 թվականից մինչև չարաղետ երկրաշարժի օրը աշխատում էր հոկող հատոցների գործարանում: Անվտանգության տեխնիկայի ինժեներ էր:

Ռազմիկը մեծ հարգանք էր վայելում գործարանում: Տարեդարձի պահին Ռազմիկն իր պաշտոնակից ընկերների հետ ձեռնարկության տնօրենի աշխատասենյակում խորհրդակցության էր: Վերջին տարիներին կառուցված յոթ հարկանի շենքի պատին պրլակատի վրա վայ շինարարները գրել էին՝ «Կառուցվում է դարերի համար»: Յոթ վայրկյանում յոթ հարկը հավասարվեց գետնին: Յոթ օր անց միայն գտան Ռազմիկին, ճանաչելով մատի մատանիով և գրպանի փաստաթղթերով:

«ԵՍ ԳՏԱ, ՆԱ Է»
ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՎԼԼՈՎՑԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԸ ծնվել է 1970 թվականին: 1987 թ. ավարտել է Երուպսկայայի անվան միջնակարգ դպրոցը և նույն թվականին էլ ընդունվել Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղի մեխանիկական ֆակուլտետը, իսկ 1988 թ. տեղափոխվել Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի ընդհանուր տեխնիկական բաժնի երկրորդ կուրս:

...Աղետաբեր երկրաշարժից մեկ, թե երկու ամիս առաջ ուսանողուհիների մեջ իր մանկության բնորդին էր փնտրում դերասանուհի Ալլա Թումանյանը՝ ինչ-որ ֆիլմում նկարահանելու համար: Երբ անվանի դերասան Սոս Սարգսյանի հետ նրանք մտնում են լսարան, Ալլան, նկատելով ուսանողուհուն, բացականչում է.

—Սոնա, ես գտա, նա է:

Սակայն... նկարահանումը չկայացավ:

...Վերջին ժամանակները դարձել էր մտազբաղ, անտրամադիր և հոռետես, հաճախ էր խոսում կյանքի վաղանցիկության և ունայնության մասին, ասում էր, որ գալու է աշխարհի վերջը, կատար վելու է անուղղելի մի հանցանք հանուր աղետ, որի զոհն են դառնալու իր սերնդակիցները:

ԶԻՆԱ ԳԵՎՈՐԳԻ
ԴԱՎԹՅԱՆ

Ծնվել է 1964 թվականին Ղուկասյանի շրջանի Մուսալեյան գյուղում: Սովորել է գյուղի դպրոցում: Այնուհետև ուսումը շարունակել է Ախուրյանի պրոֆտեխնիկական ուսումնարանում: 16 տարեկան էր, երբ մահացավ հայրը, իսկ երեք տարի անց՝ մայրը: Կյանքի դառնությունները ճաշակելով վաղ հասակից, մեծանում է 78 տարեկան տատի և հորեղբոր խնամքի տակ:

Ամուսնացավ երկրաշարժից մեկ տարի առաջ և չհաջողեց ճաշակել մայրության քերկրանքը: Աղետին զոհ գնաց «Շիրակ» կոմբինատում աշխատանքի պահին:

ԷՄԻԼՅԱ ՊԱՎԼԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1959 թ., Կումայրիում: Միջնակարգ կրթությունն ստացել է Կիրովի անվան № 2 միջնակարգ դպրոցում: Ապա ուսումը շարունակում է Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի ռուսական բաժնում: Բուհն ավարտելուց հետո մնում է ֆակուլտետի լաբորատորիայում աշխատելու: Ուներ 4 տարեկան դստրիկ, նպաստում էր երկրորդ զավակին: Բայց անհավոր երկրաշարժը վրա հասավ ինստիտուտում և կըտրեց նրա կյանքի թելը, խորտակելով բոլոր երազանքներն ու սպասումները:

ԱՆՈՒՇԻԿ ԱՂԱՍՈՒ ԹԱՎՐԻԶՅԱՆ

Ծնվել է 1963 թ., Կումայրիում: Սովորել է № 26 դպրոցում: Գերազանց գնահատականներով ավարտել է բժշկական ուսումնարանի մանկաբարձական բաժինը: Աշխատել է Ախուրյանի հիվանդանոցում, որպես բուժքույր:

Ամուսնացել է 1985 թվակա նին: Երեք ամսական երեխա յի՝ Սաթենիկ Լևոնի Անատրյանի հետ մնացել է իր տան փլատակների տակ:

Բանաստեղծական ակնհայտ շնորհքով օժտված այս կինը գրել է միայն իր մտերիմների համար, չկասկածելով անգամ, որ դրանք կարող են արժանանալ ուշադրության: Փըրկված տետրը մնացել է որպես սուրբ մասունք: Առաջին անգամ նրա բանաստեղծությունները տպագրվել են 1989 թը վականի նոյեմբերի 5-ին, «Կումայրի» թերթում, որպես հարգանքի փոքրիկ մի տուրք վաղամեռիկ բանաստեղծուհու հիշատակին: Դրանք ներկայացվում են և «Հիշողություն» հավելվածի ընթերցողներին:

ԻՐԻԿՆԱՄՈՒՏԻՆ

Քամին երկյուղած սանրում է հիմա
Դեղձուն ծամերը ցորենի արտի,
Մանուշակագույն սարերի վրա
Արևը մաղեց հալիված ոսկի:
Մեղմիկ սլիքվեց թավուտը թավշյա,
Ոռը ողողանքեց մարմնով գառի,
Եվ արտամիջյան կածանի վրա
Թրթռաց, մարեց երգը արտուտի:
Լուռ շառագունեց հորիզոնն հսկա,
Ու քրմի նման հագավ ծիրանի
Ու ծաղկանկար դաշտերի վրա
Թացվեց-մշուշվեց շողը արևի:

***

Մենակությունը թափուր սենյակիս՝
Սպունգ է բարի,
Ու ներծծում է ցավն սպասումիս
Ու ձայն չի հանում:
Մենակությունը թափուր սենյակիս
Անտեր մի՛ շնիկ,
Որ կլանչելով փարվում է փեշիս
Ու քեզ է ուզում:
Իսկ դու չես գալիս,
Իսկ դու շնիկիկ
Սպասել ես տալիս:

ՍՎԵՏԼԱՆԱ ԲՈՐԻՍԻ ԱԶԱՐՅԱՆ -ՊՐՈԽՈՐՈՎԱ

Ծնվել է 1959 թ. Կումայրիում, զինվորականի ընտանիքում: Հաճախել է Կիրովի անվան միջնակարգ դպրոցը և ավարտել բարձր առաջադիմությամբ: Դեռ մանկուց էր երազում ուսուցչուհի դառնալու մասին: Իրականացավ նրա երազանքը: Ուսանեց Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի անգլոռուսական բաժինը, աչքի ընկնելով ուսման մեջ և հասարակական աշխատանքում:

Ավարտելով բուհը, նա անմիջապես աշխատանքի անցավ № 23 միջնակարգ դպրոցում. սկզբում որպես ջոկատավար, ապա դասավար՝ տարրական դասարաններում: Աշխատանքում երբեք չէր թերանում:

Անսահման բարի էր Սվետլանան, ընկերասեր, ազնիվ: Նա լավ մայր էր և կին: Երազում էր իր երեխաներին՝ Մարինեին և Իրինային մեծացնել, տեսնել երջանիկ:

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ԱՎԱԳՅԱՆ

Դպրոցում զոհված իմ դուստրը ծնվել է Կումայրիում, 1973 թ. փետրվարի 1-ին: Արտյոմ Պետրոսյանի անվան դպրոցի 9-րդ դասարանում էր սովորում: Սիրված էր ընկերների և ուսուցիչների շրջանում: Երազում էր լրագրող դառնալ: Ինչպես էր սիրում մայրենի լեզուն, սիրելի ուսուցչուհի Համբարձումյանը պետք է ողջ լիներ, որ հավատեր: «Պատշգամբի քիվին թառած թռչնակի դայլայլն այնպես հասկանալի է ինձ: Նա ճովողում է իմ մայրենի լեզվով: Նա ինձ գարուն է բերում, իմ երազանքն է նրա կտցին...» գրել է Լուսինեն:

Նոր գարունը՝ 1989-ի գարունը, չհասցրեց այցի գալ Լուսինեին, չհասցրեց մատնանշարել նրա պատուհանը: 9-րդ «Բ» դասարանի 20 աշակերտուհիներից միայն 4-ն են այժմ ողջ: 0, կույր տարերք, բաց արա աչքերդ աղջիկս, նայիր շուրջդ, ամոքիր վշտերս:

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՎԱԳՅԱՆ

ԽԱՆՈՒՄ ՄԱՐԿՈՍԻ ՏՈՆՈՅԱՆ

Նոր միայն 30 տարին էր բոլորել, կյանքով առեցուն ու ծաղկուն տարիքում էր: 1974-75 ուսումնական տարում ավարտելով Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, աշխատանքի է ընդունվել կարի № 2 արտադրական միավորումում: Երեք անչափահաս երեխաներ ուներ:

Խանումը սիրում էր ամեն ինչի գեղեցիկն ու կատարյալը: Եվ ամենուր՝ հրավերքների, խնջույքների, ցանկալի հանդիպումների ժամանակ նրա ներկայությունը նկատելի էր, հետաքրքիր: Նա ողջ հը մայք էր իր գեղեցիկ ձայնով, ազգագրական հայրենաշունչ երգերի գեղեցիկ կատարումներով, որ շրջապատողների մեջ արթնացնում էր հարգանքի, մարդկայնության ու բարի տրամադրություններ:

Եվ հիմա մայրը մտովի զրուցում է դստեր հետ: Դու, որ սիրում էիր կենդանի ծաղիկներ, մնացիր որպես անցած գարնան հետ թառամած ծաղիկ:

ՄԱՆՈՒԿ ԿՈԼՅԱՅԻ ԿԱՂՋՎԱՆՑՅԱՆ

Այս գեղեցիկ երիտասարդը հմուտ արհեստավորի բարի համբավ էր վայելում: Մասնագիտությամբ ներկարար էր: Նրան հարգում էին թե տնքքստիլագործների կոլեկտիվում և թե հարևանները:

Դեկտեմբերի 25-ին լրանալու էր նրա ծննդյան 25 տարին: Ընկերներից մեկի խնդրանքով ներկում էր սենյակը, երբ կատուն պատեպատ էր խփվում, անհանգիստ մլավում, դռները ճանկռոտում, կարծես մարդկանց հասկացնել տալով ու զգուշացնելով: Ո՞ւմ մտքով կանցներ...

Ողջ է մայրը, որն ամեն ինչ անում է սփոփելու երեխաների վիշտը, որ Վարդուհին ու Կարինեն անհոգ մեծանան:

ՂԱՆԴԻԼՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄԻ

Ծնվել է 1959 թ. դեկտեմբերի 3-ին, բանվորի ընտանիքում: № 5 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո անդամագրվում է կոմպրեսորագործների կոլեկտիվին: Աշխատանքին զուգընթաց սովորել է պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետում: Բանակային ծառայությունից հետո նորից նույն կոլեկտիվը վերադարձավ, ուր հարազատացել էին աշխատանքը և մարդիկ: Հետո աշխատեց պետընդունման բաժնում: Աշխատասեր ու խստապահանջ մասնագետը իր փորձը ու գիտելիքները ի սպաս դրեց արտադրանքի որակի բարելավման գործին:

Վարդանը կյանքում կարգ ու կանոն էր սիրում, գիտեր նվիրվել, երբեք հանգիստ չէր նստում, միշտ մի նոր բան էր ձեռնարկում: Զոհվեց գործարանում՝ քանի-քանի մտահղացումներ կիսատ թողած:

ԷԼՄԻՐԱ ՌԵՄԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1955-ին, Թորոս գյուղում: Ավարտել է միջնակարգը, աշխատել գուլպանասկեղենի ա/մ-ում, ավարտել թեթև արդյունաբերության տեխնիկումը: Ամուսնացավ մի ռուս երիտասարդի հետ, միաժամանակ ապրելով նրա ծննդավայրում՝ Բելգորոդի մարզում: Շուտով վերադարձավ Լենինական: Աշխատում էին, ապրում վարձով և երազում բնակարանի մասին: Շուտով անիծյալ «Ռոանկյունի» թաղամասում տուն ստացան, և այդտեղ էլ զոհվեց Էլմիրան սկեսրայրի հետ, որը թողնելով երեք սիրասուն զավակներին:

ՆԵԼԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԵՍՐՈՊՅԱՆԸ

Ծնվել է 1971 թ. հունվարի 16-ին: Ավարտել է № 4 դպրոցը, ընդունվել կոշիկի ֆաբրիկայի մասսայական արտադրամասը որպես բանվորուհի: 27 օրվա աշխատանքային կենսագրություն ունեցավ, զոհվեց ֆաբրիկայում:

Հազիվ 17 գարուն տեսած աղջիկը թողեց ծնողներին խոր կսկիծի մեջ: Եվ որդեկորույս հայրը փորձում է բանաստեղծության լեզվով խոսել դստեր հետ.

Իմ քնքուշ ծաղիկ, անգին մարգարիտ,
Նոր էր լրացել 17 տարիդ,
Արի մեզ կյանք տուր,
խնդրում եմ, արի:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱԼԲՈՄԻՑ

ԴԻՄԱՑԵՔ, ՀԱՅԵՐ

Երկրաշարժին հաջորդող ծանր ու սև օրեր էին: Նամակ ստացա Արցախից: Բա նաստեղծ Էռնեստ Եսայանը ծրարի վրա և նամակի բոլոր անկյուններում գրել էր. «Դիմացեք, հայեր»:

Դիմանա՞լ: Ինչպե՞ս: Փլա տակների տակ մնաց նաև եղբորս փոքրիկը՝ իմ Անին: Այդ օրը նրա տարեդարձն էր, որն ավաղ, վերջինը եղավ: Ամեն անգամ մենք նրա ծննդյան օրը տանում էինք նվերների հետ մեկտեղ մի «Անի» կոնյակ: «Մեր Անիի հարսանիքին, որը պետք է կատարեք Անի մայրաքաղաքում» մակագրությամբ:

Դիմանա՞լ....

Ավերակ է իմ շեն ու շքեղ քաղաքը, չկան իմ հարազատները, ընկերները, աշակերտները ու սիրտս փշրված է ամենափրկիչ եկեղեցու պես: Մաքառենք սակայն ու դիմանանք ազգովի՝ ի հեճուկս սև ճակատագրի ու մեր թշնամիների:

***

Իմ փոքրիկ Անի,
Իմ անանց մորմոք,
Ցավ անբուժելի...
Եթե աշխարհ գաս
Դու ծաղիկ դարձած,
Կապույտ մանուշակ դառնաս
երևի...
Հնգիկ ու խոնարհ
Քո աչիկներից քեզ
կճանաչեմ...
Ու կհառաչեմ,
Ու արցունքներս ցողի պես թեթև
Կընկնեն թերթերիդ,
Իմ վշտի ծաղիկ,
Քնքուշ իմ Անի...

ԼՈՒՍԻՆԵ ԳԻՆՈՍՅԱՆ

ԿՅՈՒՐԵՂՅԱՆՆԵՐ

1906 թվականի փետրվարի 28-ին է ծնվել Ռոզա Կյուրեղյանը: Ամուսինը՝ Լյուդվիգը զոհվել է 1942 թվականին, Հայրենական մեծ պատերազմի ժամանակ: Ռոզան փոխարինել է ռազմաճակատ մեկնած ամուսնուն, 6 անչափահաս երեխաների համար եղել թե հայր և թե մայր: Զրկանքների գնով, անլուր տառապանքներով մեծացրել է իր զավակներին:

Երկար տարիներ աշխատել է Չկալովի անվան կարի արտադրական միավորումում, մինչև կենսաթոշակի անցնելը: Վեց երեխաներով, 24 թոռներով և 7 ծոռներով էր մը-խիթարվում ծերունազարդ կինը, որի կյանքը դառնություններով լի տառապանքի ուղի է եղել: Եվ այսպես անպասելի ու անհեթեթ հրաժեշտ տվեց կյանքին, իր սիրասուն թոռան՝ Անժելայի հետ միասին...

Անժելան ծնվել է 1981թ. ապրիլի 10-ին, Լենինականում: Հաճախում էր քաղաքի № 38 դպրոցը: Ուզում էր դառնալ դաշնակարուհի:

Անժելան մեծ սիրով էր հաճախում դպրոց և պարտականաճաչորեն կատարում բոլոր հանձնարարությունները, կենսախինդ էր, աշխույժ, երգ ու պարով լեցուն:

Սեր, հոգ ջերմություն ուներ: Մնաց տանը՝ Վարդքաղի 1-ին թաղամասի 1-ին շենքում...

ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐ

Աիդան ծնվել է 1956 թվականին: Երբ զոհվեց, 32 տարեկան էր: Աշխատում էր գալվանամետր գործարանում: Ընտանիքը նրա համար ամեն ինչ էր: Նա ուզում էր իր մոր ու սկեսրոջ նման բազմազավակ մայր դառնալ, բայց ճակատագիրը թույլ չտվեց կատարելու խոստումը: Նա զոհվեց իր 4 ամյա Արամոյի հետ, թողնելով երկու որբերի՝ Արփինեին ու Լևոնին:

Նրա անդրանիկ զավակը՝ Արամոն ծնվել էր 1984 թվականին, պապիկի 60-ամյակի օրը, կրելով նրա անունը: Գոնե ապրեր այնքան, որքան պապը ապրեց: Երկրաշարժի պահին Աիդան բարձրացել էր վերև, ինչ-որ բան վերցնելու ու առաջին իսկ ցնցումներից հետվել էր դեպի դուռը, դեպի Արամոն, բայց չէր հասցրել: Զոհվեցին: Ու փոքրիկ Լևոնը վշտից, ինչպես ասում են, բանաստեղծ է դարձել. «Մայրս ամառ էր, եղբայրս գարուն, իրար են գրկել ամառ ու գարուն: Արամոս մի ծառ էր դալարուն, մայրս՝ ուռենի վշտահար»:

ՔՈՒՅՐԵՐԸ

Հրաշքով ողջ մնաց երկու դուստրերին կորցրած Գոհար Ավետիսյանը: Կամքի գերբնական ուժով ողջ մնաց, անապով 16-ամյա որդուն՝ Գագի կին և ամուսնուն՝ Սերժին: Ու հիմա կորցրած զավակների փոխարեն, ծնողները ջերմ ցանկություն ունեն որդեգրելու 2 որբերի...

Անահիտը ծնվել է 1966-ին, Ռայան՝ 1970-ին: Քույրերը միջնակարգ կրթությունն ստացել են Կարախանյանի անվան դպրոցում: Անահիտն ավարտել էր թեթև արդյունաբերության տեխնիկումը և վաճառող էր աշխատում «Գայանե» պասսաժում: Զոհվեց ուտերի աշխատողների ակումբում:

Ռայան պոլիտեխնիկումի ապրանքագիտության բաժնի 2-րդ կուրսի ուսանող էր: Հանրախանութում պրակտիկայի էր և այդտեղ էլ կնքեց մահկանացուն:

Աղետի օրը քունը չէր տանում: Շուտ արթնացել էր, գործերն ավարտել ժամանակից շուտ: Դուստրերը մոր օգնականն էին բոլոր գործերում, նրանց ասեղնագործությունները, խնամքով պատրաստած թխվածքները, կերակուրները արժանի էին ընդօրինակման: Ով տեսնում, ասում էր «տեղովը շնորհք են»:



ՈՍԿԵ ՋԵՌՔԵՐՈՎ ՎԱՐՊԵՏԸ

ԱՎԱԼՅԱՆ Ռոստոմը ծնվել է 1963 թ. հուլիսի 8-ին, Լենինականում, բանվորի ընտանիքում: 1970 թ. հաճախել է № 22 միջնակարգ դպրոցը, այնուհետև տեղափոխվել է № 25 դպրոց: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է № 10 գեղարվեստատեխնիկական ուսումնարան, ստանալով ոսկերիչ-փորագրողի մասնագիտություն: Օրինակելի ու շնորհալի սանը շատ բան սովորեց ուսումնարանության տարիներին, և այս տահական չէ, որ նրան ոսկե ձեռքերի վարպետ էին անվանում:

Ճակատագրից խուսափել չես կարող...Աշխատանքի անցավ կահույքի ֆաբրիկայում 1988-ին: Նա չհասցրեց այստեղ ևս ի ցույց դնել իր շնորհքը, իր մասնակցությունն ունենալ ֆաբրիկայի հաջողություններում, զոհվեց աշխատանքի պահին, իր նոր ընկերների հետ:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐՏԻՆԻ ԺԱՄԱԿՈՉՅԱՆ

Պարզ ու անպաճույճ կենսագրություն ունի այս գեղեցկուհին: Ծնվել է 1953 թվականին, Լենինականում: Սովորել է Օրջոնիկիձեի անվան դպրոցում: Ապա ուսանել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Կոմայրիի մասնաճյուղում, ստացել ինժեներ-տեխնոլոգի որակավորում:

Սիրում էր իր աշխատանքը, կապված էր նրա հետ բոլորանվեր սիրով: Եվ աշխատատեղում, գործի ժամանակ էլ զոհվեց կոշիկի անհատական պատվերների «Նաիրի» արտադրական միավորումում...

ԱԴԵԼԱԻԴԱ ԱՎԵՏԻՔԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1954 թ. դեկտեմբերի 29-ին, Լենինականում, մանկավարժի ընտանիքում: Բնությունը Ադիկին շռայլորեն օժտել էր բարեմասնություններով՝ առինքնող ու գեղեցիկ արտաքին, անհիշաչար, ժլատ երես ու մարդասեր: Հետևելով մանկավարժ ծնողների օրինակին, դեռ պատանեկան տարիներից, երազում էր մանկավարժ դառնալ: Գերազանց ավարտելով № 19 միջնակարգ դպրոցը, Ադիկը ընդունվում է Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը: Իրականանում է նրա երազանքը՝ նշանակում է ստանում քաղաքի պիոներների պալատում որպես մաթեմատիկայի խմբակի ղեկավար:

Եվ...1988 թվականի հոկտեմբերին փոխարինող ուսուցիչ նշանակվեց Ղարիբջանյանի անվան դպրոցում: Դասավար էր առաջին դասարանում: Ինչպիսի սիրով ու նվիրումով էր գնում դասերին: Երջանիկ էր զգում իրեն, ամուր թելերով կապվել էր երեխաների աշխարհին: Այդ կարճ ժամանակաշրջանում աշակերտները և ծնողները սիրեցին ու գնահատեցին Ադիկին: Իր դասարանի 30 փոքրիկների հետ նա զոհ դարձավ, թողնելով իր երկու զավակներին մայրական քնքշանքից զուրկ:

ՅՈՂԻԿ ԿՈՐՅՈՒՆԻ ՀՈՎ ՀԱՆՆԻՍՅԱՆԸ ծնվել է 1959 թ. Լենինականում: Սովորել և ավարտել է Գոգոլի անվան դպրոցը բարձր առաջադիմությամբ: Ընդունվել է պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետը: 1984-ին ավարտել է ինստիտուտը և աշխատանքի անցել միկրոէլեկտրաշար ժիչների գործարանում որպես ինժեներ-տեխնոլոգ:

Մեծ հարգանք ուներ իր կոլեկտիվում: Ցողիկին սիրում էին գործիմացության, համեստության և աշխատասիրության համար: Ցողիկը 2 փոքրիկների մայր էր:

Բնակարան ստացավ, «երջանիկ» բնակարանամուտ տոնեց և ապրեց այստեղ՝ ընդամենը 4 օր և զոհ դարձավ փոքրիկների՝ Գուրգենիկի և Անիի հետ, որն այդպես էլ լուսանկար չունեցավ:

ՆԵԼԼԻ ԱՐՍԵՆԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Այս հեզահամբույր և բարի կնոջ ամբողջ կյանքը տառապանքով է անցել: Տեսել է պատերազմ, սով, անհայրություն, բազում զրկանքներ, վիշտ ու թախիծ:

Ծնվել է 1926 թվականի երկրաշարժյան դաժան ու մահաստիպուտ օրերին և մշտապես բախվել կյանքի դժվարություններին ու անարդարություններին, իր մեջ մշակել անսահման համբերություն, տոկալու, փորձություններին դիմակայելու կարողություն: Ինչպես էր հպարտանում իր Արսեն որդով, իր Արթուրիկ թոռով:

ԱՐԹՈՒՐ ԱՐՍԵՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ երկու տարին էր լրանում, երբ վրա հասավ դեկտեմբերի 7-ը: Այդ օրը առաջին և վերջին անգամ արտաբերեց «Մամա» բառը՝ աշխատանքի շտապող մայրիկի հետևից: 13 օր անց հանեցին տատի հետ փլատակների տակից: Մանկական փափուկ ձեռքերի մեջ ամուր մնացել էր արջուկ-խաղալիքը:

ՍՊԱՍՈՒՄ

Վիշտ կար Ռուզաննայի սրտում, անասելի ծանր ու չսպիացող մի վերք կրծում էր ներսից: Երազ էր դարձել Ռուզաննա Վոլոդյայի Կարապետյան-Ազարյանի երջանկությունը: Կարի արտադրական միավորման բանվորուհին, որ հպարտությամբ երեք որդի էր մեծացնում, 1988 թ. սեպտեմբերին կորցրեց որդուն. ավտովթարից զոհվեց որդին ու... մայրական սիրտը չէր հաշտվում դաժան ճակատագրի հետ: Հաճախ երկար ու լուռ նայում էր երկու որդիներին ու մի տեսակ վախով ու դողոցով քաշում նրանց իր թևերի տակ՝ ասես թաքցնելու վտանգից: Անսովոր վախ կար սրտում, ձագուկներին կորցնելու աճապարանքով ու անորոշ մի վախ: Չէր սխալվում մայրական սիրտը...Դեկտեմբերի 7-ին Ծիրա կացի № 2 շենքի փլատակների տակ զոհվեց Ռուզաննան իր փոքրիկ որդու՝ Հայկի հետ, որի երեք տարին դեռ չէր բոլորել:

ԱՐԹՈՒՐ ԻԾԽԱՆԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Արթուրը ծնվել է 1968 թվականին Կումայրիում: Ուսումն ստացել է № 24 միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո շարունակել է սովորել Ախուրյանի պրոֆտեխնիկական ուսումնարանում: Մինչև խորհրդային բանակ զորակոչվելը, շուրջ մեկ տարի, հասցրեց աշխատել նաև տեքստիլ կոմբինատում:

Համեստ ու բարի, ուշիմ, խորաթափանց հայացքով, անարդարություններ չհանդուրժող այս երիտասարդը բազմաթիվ երազանքներ ուներ, որոնք պատրաստվում էր իրականացնել ծառայությունից հետո: Զինվորական ծառայության ընթացքում Արթուրը փայլեց իր ողջ էությամբ: Զորամասի հրամանատարությունը գերազանց ծառայության համար մի քանի անգամ շնորհակալագրեր ուղարկեց նրա ծնողներին, երաշխավորեց անցնելու նաև ԽՄԿԿ անդամության թեկնածուի շարքերը:

1988-ի նոյեմբերին վերադարձավ հայրենի քաղաք: Տակավին երիտասարդ, բայց ուներ կատարյալ մարդու բոլոր բարեմասնությունները, հավատում էր կյանքին ու գալիքին, սիրում էր իր ծողովրդին, ընկերներին, ընտանիքը: Ավաղ... դարանակալած աղետը զինվորական ծառայությունը ընդամենը մի քանի օր ավարտած երիտասարդին իր գիրկն առավ...

ՄԻ ՈՂՋ ԸՆՏԱՆԻՔ

ՀԱՄԵՍՏ ՍԵՐԳՈԺԱՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ ծնվել է 1958 թվականին Կումայրիում: Սովորել է № 16 միջնակարգ դպրոցում և սննդարդյունաբերության տեխնիկումում: Համեստը աշխատում էր սննդանոցի խանութում որպես վաճառողուհի: Ամուսնացած էր, ուներ երկու երեխա:

Ամուսինը՝ ՎԱԼԵՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ ծնվել էր 1965 թվականին, աշխատում է «Լենշին» տրեստում որպես կռուն կավար:

Երկրաշարժի օրը Համեստը իր մորը պատմում է երազը, որ իբր թե մազերը սպիտակել էին, իսկ աղջիկը՝ ԼԻԼԻԹԸ տատիկին այդ առավոտյան ասում է. «Տես, տես տատիկ, ամպերը վառվում են...»:

5 տարեկան Լիլիթի խոսքերից մեկ ժամ անց սկսվում է երկրաշարժը և նա ծնողների՝ Համեստի և Վալերի հետ զոհվում է Կալինինի փողոցի 14 ա շենքում:

Ֆրանսիացի լուսանկարչուհի կան թղթակիցները Լենինականում: Լուսանկարները՝ Վ. ԿՈՏՈՎԻ

«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆԶՆԱԼՈՒՄԲ

ԿՈՒՄԱՅՐԻԻ ՔԱՂՀՐԱՅԻ ՏՊԱՐԱՆ, ՄԱՅԻՍՅԱՆ Փ. 47